WEEKLY MARKET OVERVIEW

Macro | Equities | Crypto | Earnings | Bonds| Futures

23 February 2025

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



Տոկոսադրույքի իջեցման սպասումներ նվազել են:



ԱՄՆ ETF-ները արձանագրում են ռեկորդային բարձր ներհոսք:

Բոլոր ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունները աճել են:

Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը աճեց 1.13% -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 1.14%-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը աճեց 0.29% -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 0.63%-ով



Տոկոսադրույքի իջեցման սպասումներ

2026 թվականին տոկոսադրույքի իջեցման վերաբերյալ շուկայական սպասումները նվազում են, որը հանգեցնում է իրավիճակի աստիճանական վերագնահատման: Շարունակական անկումը հաստատում է այն թեզը, որ տոկոսադրույքները երկար ժամանակ բարձր կմնան, ինչը օգնում է բացատրել ֆոնդային շուկայի անկայունությունը և զգայուն ոլորտների վրա ճնշումը:



Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան

- Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:
- Պայմանավորված մակրոտնտեսական գործոններով շուկաները արձանագրեցին որոշակի անկում, սակայն գնումները վերականգնեցին դրական եկամտաբերությունը:
- Շուկաներում հստակ ուղղորդված միտում չի երևում:



Խոշոր տեխնոլոգիական ընկերություններ

Խոշոր տեխնոլոգիական ընկերությունները կտրուկ անկում ապրեցին հունվարի վերջին գրանցված առավելագույն մակարդակից՝ ճեղքելով նախորդ աջակցության մակարդակը, որին հաջորդեց որոշակի վերականգնումը:

Բաժնետոմսերի շուկա | 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Walmart-ը (WMT) 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 190.7 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 5.6%-ով ավելի է, ինչը պայմանավորված է համաշխարհային էլեկտրոնային առևտրի աճով և ավանդական խանութներում շարունակական աճով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 0.74 դոլար, գերազանցելով սպասումները, ինչը պայմանավորված է առցանց վաճառքների բարձր մակարդակով, ինչպես նաև գովազդային եկամուտների աճով: Չնայած դրական ցուցանիշներին, ընկերության 2026 թվականի ֆինանսական կանխատեսումն ընկալվել է բացասական:

Booking-ը (BKNG) 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 6.35 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 16%-ով ավելի է, ինչը պայմանավորված է ճանապարհորդությունների մեծ պահանջարկով և համախառն ամրագրումների աճով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 48.80 դոլար, ինչը գերազանցել է վերլուծաբանների սպասումները, արտացոլելով ամրագրումների և միջազգային ճանապարհորդությունների վրա կատարվող ծախսերի աճը: Հաշվետվությունից հետո բաժնետոմսերը նվազել են, չնայած 2026 թվականին համախառն ամրագրումների ու եկամուտների դրական կանխատեսումներին:

Բաժնետոմսերի շուկա | 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Deere & Company (DE) ընկերությունը 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 16.8 միլիարդ դոլարի հասույթ, որը փոքր-ինչ ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ Հյուսիսային Ամերիկայում գյուղատնտեսական սարքավորումների վաճառքի նվազման պատճառով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 6.14 դոլար, ինչը գերազանցել է կանխատեսումները, ինչը պայմանավորված է ծախսերի արդյունավետության բարելավմամբ, չնայած գյուղատնտեսական հիմնական շուկաներում գնորդների զգուշավոր տրամադրությանը:

Palo Alto Networks-ը (PANW) 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 6.42 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 22%-ով ավելի է, ինչը պայմանավորված է անվտանգության բաժանորդագրությունների ուժեղ աճով և արհեստական բանականությամբ աշխատող կիբերանվտանգության արտադրանքի ձեռնարկությունների կողմից արագացված ներդրմամբ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 3.78 դոլար, ինչը գերազանցել է վերլուծաբանների կանխատեսումները: Ներդրողները ունեն որոշկի անհանգստություն արհեստական բանականության ոլորտում կատարվող հսկայական կապիտալ ծախսերի պատճառով:

Պարտատոմսերի շուկա

Այս գրաֆիկը ցույց է տալիս ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերության դինամիկան՝ տարբեր ժամկետայնության պարտատոմսերի համար՝ 2, 5, 7, 10 և 30 տարի:

- Նախորդ շաբաթ բոլոր ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունները աճեցին:
- Սա բնորոշ է bear-flattening շարժին, երբ շուկան վերագնահատում է ԴՊՀ-ի քաղաքականությունը և սպասում է ավելի քիչ կամ ավելի ուշ տոկոսադրույքների նվազեցումների:

Մետաղներ

Շաբաթվա կեսի կտրուկ անկումից հետո մետաղները, հիմնականում արծաթը և պլատինը, ագրեսիվ կերպով վերադարձել են աճին: Այս միաժամանակյա վերականգնումը ենթադրում է ռիսկի նկատմամբ ախորժակի վերականգնում: Պղինձը վերականգնվում է աստիճանաբար, ինչը վկայում է արդյունաբերական պահանջարկի սպասումների կայունացման մասին:

Դոլարի ինդեքս

Որբաթ դոլարն անկում ապրեց մաքսատուրքերի մասով որոշումից և ՀՆԱ-ի թույլ ցուցանիշներից հետո, բայց շաբաթ ավարտեց դրական եկամտաբերությամբ:

Ոսկի

Ոսկին հատեց 5000 դոլարի մակարդակը:

Նավթ

Նավթի գները կտրուկ աճել են՝ հասնելով վեցամսյա ամենաբարձր մակարդակին (Իրանի հետ լարվածության և պաշարների զգալի նվազման որոշակի աջակցությամբ, որը սեպտեմբերի սկզբից ի վեր ամենամեծ անկումն է):

Bitcoin

Բիթքոյնը դժվար շաբաթ ունեցավ:

Հետաքրքիր փաստեր

Դեպի ԱՄՆ ETF-ներ ներհոսքը 2026 թվականի առաջին վեց շաբաթների ընթացքում նախորդ տարվա համեմատ աճել է 94%-ով՝ հասնելով ռեկորդային 245 միլիարդ դոլարի: Սա երրորդ անընդմեջ տարեկան աճն է և 2024 թվականից ի վեր աճը կազմում է 346%: Սա կրկնակի ավելի է, քան 2021 թվականին «մեմերի» բաժնետոմսերի ժամանակ գրանցված ներհոսքը:
Ավելին, առաջին անգամ 100 միլիոն դոլարը գերազանցող ETF-ների քանակը գերազանցել է 500-ը: Ռիսկի ախորժակն ունի իր պատմության մեջ ամենաուժեղ տարեկան մեկնարկը:



«Փառահեղ յոթնյակի» բոլոր յոթ ընկերությունները այս տարվա ընթացքում բացասական եկամտաբերություն են արձանագրել և ավելի վատ ցուցանիշներ ունեն, քան S&P 500-ը:



Հետաքրքիր փաստեր

Համաշխարհային պարտատոմսերի շուկայի եկամտաբերությունը նվազում է. Համաշխարհային պարտատոմսերի 87%-ի եկամտաբերությունը այժմ 5%-ից ցածր է: Իսկ պարտատոմսերի 14%-ի եկամտաբերությունը կազմում է 2%-ից պակաս, 32%-ը՝ 3%-ից պակաս, իսկ 60%-ը՝ 4%-ից պակաս: Մոտ 3% գնաճի պայմաններում սա նշանակում է, որ պարտատոմսերի ներդրողների մեծ մասը տարեկան ստանում է ընդամենը մոտ 2% իրական եկամտաբերություն, մինչդեռ մոտ մեկ երրորդը գործնականում ոչինչ չի վաստակում: Այս ցուցանիշը հաշվի չի առնում գործարքային ծախսերը և հարկերը:



2025 թվականի դեկտեմբերին ԱՄՆ-ում բնակարան գնողների 29.0%-ը վճարել է կանխիկ իրենց գնումների համար, ինչը ամենացածր ցուցանիշն է 2020 թվականից ի վեր դեկտեմբեր ամսվա համար: Սա երկրորդ տարեկան անկումն է և ամենակտրուկ անկումը 2012-2014 թվականներից ի վեր: Համեմատության համար, 2023 թվականի գագաթնակետը կազմել է 33.7%, երբ հիփոթեքային տոկոսադրույքները հասել են 7% և ավելիի:



Այս շաբաթ 661 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2025 թվականի չորրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են NVIDIA (NVDA), Home Depot (HD), TJX (TJX), Salesforce (CRM), American Tower (AMT), Dell (DELL) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվություններին:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change
1	NVDA	NVIDIA Corp	Technology	Semiconductors	USA	4565.97B	46.54	187.90	-0.04%
2	HD	Home Depot, Inc	Consumer Cyclical	Home Improvement Retail	USA	376.88B	25.81	378.58	-1.29%
3	RY	Royal Bank Of Canada	Financial	Banks - Diversified	Canada	239.02B	16.97	170.70	-0.03%
4	TJX	TJX Companies, Inc	Consumer Cyclical	Apparel Retail	USA	173.80B	34.58	156.51	-0.46%
5	CRM	Salesforce Inc	Technology	Software - Application	USA	173.62B	24.72	185.29	-1.33%
6	TD	Toronto Dominion Bank	Financial	Banks - Diversified	Canada	161.87B	11.70	95.81	-0.34%
7	LOW	Lowe's Cos., Inc	Consumer Cyclical	Home Improvement Retail	USA	156.05B	23.06	278.18	-1.40%
8	INTU	Intuit Inc	Technology	Software - Application	USA	106.17B	26.13	381.54	-2.06%
9	BMO	Bank of Montreal	Financial	Banks - Diversified	Canada	101.77B	17.55	143.56	0.74%
10	MELI	MercadoLibre Inc	Consumer Cyclical	Internet Retail	USA	101.22B	48.73	1996.55	-0.62%
11	BNS	Bank Of Nova Scotia	Financial	Banks - Diversified	Canada	94.21B	18.87	76.20	0.33%
12	CM	Canadian Imperial Bank Of Commerce	Financial	Banks - Diversified	Canada	90.91B	16.03	98.11	1.52%
13	AMT	American Tower Corp	Real Estate	REIT - Specialty	USA	86.51B	29.47	184.79	-0.98%
14	SNPS	Synopsys, Inc	Technology	Software - Infrastructure	USA	84.65B	55.14	442.44	0.03%
15	NU	Nu Holdings Ltd	Financial	Banks - Regional	Cayman Islands	83.93B	33.56	17.32	0.87%
16	MNST	Monster Beverage Corp	Consumer Defensive	Beverages - Non-Alcoholic	USA	80.11B	46.68	81.99	-1.43%
17	DELL	Dell Technologies Inc	Technology	Computer Hardware	USA	78.90B	15.88	119.06	1.95%
18	WBD	Warner Bros. Discovery Inc	Communication Services	Entertainment	USA	70.71B	152.08	28.53	-0.90%
19	EOG	EOG Resources, Inc	Energy	Oil & Gas E&P	USA	67.21B	12.33	123.87	1.31%
20	MDLN	Medline Inc	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	62.53B	30.07	47.60	-0.23%

AraratBank

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, FEB. 23					
8:00 am	Fed governor Christopher Waller speaks				
10:00 am	Factory orders	Dec.			2.7%
TUESDAY, FEB. 24					
8:00 am	Chicago Fed President Austan Goolsbee speaks				
9:00 am	S&P Case-Shiller home price index (20 cities)	Dec.			1.4%
9:00 am	Atlanta Fed President Raphael Bostic speaks				
9:15 am	Fed governor Christopher Waller speaks				
9:30 am	Fed governor Lisa Cook speaks				
10:00 am	Wholesale inventories	Dec.			0.2%
10:00 am	Consumer confidence	Feb.			84.5
WEDNESDAY, FEB. 25					
9:35 am	Richmond Fed President Tom Barkin speaks				
THURSDAY, FEB. 26					
8:30 am	Initial jobless claims	Feb. 21			
FRIDAY, FEB. 27					
8:30 am	Producer price index (delayed report)	Jan.			0.5%
8:30 am	Core PPI	Jan.			0.4%
8:30 am	PPI year over year				3.0%
8:30 am	Core PPI year over year				3.5%
10:00 am	Construction spending (delayed report)	Nov.			0.5%

AraratBank

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am